Համարը N 633-Ն	Տեսակը Ինկորպորացիա
Տիպը Որոշում	Կարգավիճակը Գործում է
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2004.05.26/28(327) Հոդ.671	Ընդունման վայրը Երևան
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն	Ընդունման ամսաթիվը 22.04.2004
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ	Ստորագրման ամսաթիվը 05.05.2004
Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահ	Վավերացման ամսաթիվը 12.05.2004
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 05.06.2004	Ուժը կորցնելու ամսաթիվը

⊟Փոփոխողներ և ինկորպորացիաներ

Մայր փաստաթուղթ:Կառավ,22.04.2004,N 633-Ն		
Մայր փաստաթղթին փոփոխող փաստաթղթերը՝		Համապատասխան ինկորպորացիան՝
Կառավ,26.08.2010,N 1187-Ն		Կառավ,22.04.2004,N 633-Ն
Կառավ,15.09.2011,N 1321-Ն		Կառավ,22.04.2004,N 633-Ն
Կառավ,25.09.2014,N 1039-Ն		Կառավ,22.04.2004,N 633-Ն

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
12 մայիսի 2004 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ապրիլի 2004 թվականի N 633-Ն

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքի 7-րդ հոդվածի «ժա» ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. ***(կետն ուժը կորցրել է 26.08.10 N 1187-Ն)***

3. ***(կետն ուժը կորցրել է 26.08.10 N 1187-Ն)***

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության վարչապետ **Ա. Մարգարյան**

2004 թ. մայիսի 5
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի N 633-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված քաղաքացիական պաշտպանության պլանների մշակումը:

2. Քաղաքացիական պաշտպանության պլանը Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների խնդիրները, գործողություններն ու դրանց իրականացման կարգը կանոնակարգող փաստաթղթերի փաթեթ է՝ բնակչությանն ու նյութական արժեքները պաշտպանելու համար:

3. Քաղաքացիական պաշտպանության պլանները դասակարգվում են՝

ա) հանրապետականի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության պլան.

բ) գերատեսչականի՝ Հայաստանի Հանրապետության հանրապետական գործադիր մարմնի, պետական մարմնի և դրանց առանձնացված ստորաբաժանումների քաղաքացիական պաշտպանության պլան.

գ) մարզի՝ Հայաստանի Հանրապետության մարզի քաղաքացիական պաշտպանության պլան.

դ) Երևան քաղաքի՝ Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի քաղաքացիական պաշտպանության պլան.

ե) համայնքի՝ Հայաստանի Հանրապետության համայնքի քաղաքացիական պաշտպանության պլան.

զ) կազմակերպության՝ անկախ կազմակերպական-իրավական ձևից, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող պաշտպանական, տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության տեսանկյունից բարձր վտանգավորություն ներկայացնող կազմակերպությունների, հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտների, 100 և ավելի աշխատող ունեցող կազմակերպության և անհատ ձեռնարկատիրոջ քաղաքացիական պաշտպանության պլան.

է) քաղաքացիական պաշտպանության ծառայության՝ հանրապետական, մարզային,

համայնքային և կազմակերպության քաղաքացիական պաշտպանության ծառայության քաղաքացիական պաշտպանության պլան:

(3-րդ կետը խմբ. 26.08.10 N 1187-Ն)

3.1. Քաղաքացիական պաշտպանության պլան-ժամանակացույցը կազմվում է մինչև 100 աշխատող ունեցող, անկախ կազմակերպական-իրավական ձևից, կազմակերպության համար:

(3.1-ին կետը լրաց. 26.08.10 N 1187-Ն)

II. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ, ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

4. Քաղաքացիական պաշտպանության պլանները և քաղաքացիական պաշտպանության պլան-ժամանակացույցը մշակվում են՝

ա) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության հանրապետական պլանը՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից.

բ) Հայաստանի Հանրապետության հանրապետական գործադիր մարմնի, պետական մարմնի և դրանց առանձնացված ստորաբաժանումների քաղաքացիական պաշտպանության պլանը՝ հանրապետական գործադիր մարմնի, պետական մարմնի և դրանց առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների կողմից.

գ) Հայաստանի Հանրապետության մարզի քաղաքացիական պաշտպանության պլանը՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության մարզային փրկարարական վարչության կողմից.

դ) Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի քաղաքացիական պաշտպանության պլանը՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Երևան քաղաքի փրկարարական վարչության կողմից.

ե) Հայաստանի Հանրապետության համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը՝ Հայաստանի Հանրապետության համայնքի ղեկավարության կողմից Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության համապատասխան մարզային փրկարարական վարչության մեթոդական օգնությամբ.

զ) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կազմակերպության քաղաքացիական պաշտպանության պլանը՝ կազմակերպության կողմից.

է) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կազմակերպության քաղաքացիական պաշտպանության պլան-ժամանակացույցը՝ կազմակերպության կողմից.

ը) քաղաքացիական պաշտպանության ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանը՝ քաղաքացիական պաշտպանության ծառայության ղեկավարության կողմից:

(4-րդ կետը խմբ. 26.08.10 N 1187-Ն, փոփ. 25.09.14 N 1039-Ն)

5. Քաղաքացիական պաշտպանության պլանները և քաղաքացիական պաշտպանության պլան-ժամանակացույցը համաձայնեցվում են՝

ա) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության հանրապետական պլանը՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների ղեկավարների հետ.

բ) Հայաստանի Հանրապետության հանրապետական գործադիր մարմնի, պետական մարմնի և դրանց առանձնացված ստորաբաժանումների քաղաքացիական պաշտպանության պլանը՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի, այլ շահագրգիռ պետական կառավարման մարմինների ղեկավարների և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության հետ.

գ) Հայաստանի Հանրապետության մարզի քաղաքացիական պաշտպանության պլանը՝ համապատասխան զինվորական կայազորի պետի և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության հետ.

դ) Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի քաղաքացիական պաշտպանության

պլանը՝ Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի զինվորական կայազորի պետի և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության հետ.

ե) Հայաստանի Հանրապետության համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության համապատասխան մարզային փրկարարական վարչության պետի հետ, սահմանամերձ գոտում գտնվող համայնքներինը՝ նաև համապատասխան զինվորական կայազորի պետի հետ.

զ) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կազմակերպության քաղաքացիական պաշտպանության պլանը՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության համապատասխան մարզային կամ Երևան քաղաքի փրկարարական վարչության հետ, ռազմական դրության պայմաններում գործունեությունը շարունակող և սահմանամերձ գոտում գտնվող կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության պլանը՝ նաև համապատասխան զինվորական կայազորի պետի հետ.

է) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կազմակերպության քաղաքացիական պաշտպանության պլան-ժամանակացույցը՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության համապատասխան մարզային կամ Երևան քաղաքի փրկարարական վարչության հետ.

ը) քաղաքացիական պաշտպանության ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանը՝

- հանրապետական քաղաքացիական պաշտպանության ծառայության՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության հետ,

- մարզային քաղաքացիական պաշտպանության ծառայության՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության համապատասխան մարզային փրկարարական վարչության և վերադաս հանրապետական ծառայության պետի հետ,

- համայնքային և կազմակերպության քաղաքացիական պաշտպանության ծառայությունների՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության համապատասխան մարզային կամ Երևան քաղաքի փրկարարական վարչության հետ:

(5-րդ կետը խմբ. 26.08.10 N 1187-Ն, փոփ. 25.09.14 N 1039-Ն)

6. Քաղաքացիական պաշտպանության պլանի մշակման աշխատանքները կազմակերպում, ղեկավարում և մշակված պլանը համաձայնեցնելուց հետո հաստատում է՝

ա) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության հանրապետական պլանը՝ Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի ներկայացմամբ.

բ) հանրապետական գործադիր մարմնի, պետական մարմնի քաղաքացիական պաշտպանության պլանները՝ տվյալ մարմնի ղեկավարի կողմից.

գ) ***(ենթակետն ուժը կորցրել է 15.09.11 N 1321-Ն)***

դ) հանրապետական գործադիր մարմնի և պետական մարմնի առանձնացված ստորաբաժանումների քաղաքացիական պաշտպանության պլանը՝ համապատասխան վերադաս մարմնի ղեկավարի կողմից.

ե) Հայաստանի Հանրապետության մարզի քաղաքացիական պաշտպանության պլանը՝ Հայաստանի Հանրապետության մարզպետի կողմից.

զ) Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի քաղաքացիական պաշտպանության պլանը՝ Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքապետի կողմից.

է) Հայաստանի Հանրապետության համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը՝ Հայաստանի Հանրապետության համայնքի ղեկավարի կողմից.

ը) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կազմակերպության քաղաքացիական պաշտպանության պլանը՝ կազմակերպության ղեկավարի կողմից.

թ) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կազմակերպության քաղաքացիական պաշտպանության պլան-ժամանակացույցը՝ կազմակերպության ղեկավարի կողմից.

ժ) քաղաքացիական պաշտպանության ծառայության քաղաքացիական պաշտպանության՝

- հանրապետական պլանը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից,

- մարզային պլանը՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետի կողմից,

- համայնքային և կազմակերպության պլանները՝ համապատասխան քաղաքացիական պաշտպանության պետի կողմից:

(6-րդ կետը խմբ. 26.08.10 N 1187-Ն, խմբ., փոփ. 15.09.11 N 1321-Ն)

7. Քաղաքացիական պաշտպանության պլանները ճշտվում են յուրաքանչյուր տարի՝ հունվարի 1-ի դրությամբ:

8. ***(կետն ուժը կորցրել է 26.08.10 N 1187-Ն)***

9. Քաղաքացիական պաշտպանության պլանների և գործողությունների պլան-ժամանակացույցերի օրինակելի ձևերը և մշակման չափանիշները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(9-րդ կետը փոփ. 26.08.10 N 1187-Ն)

(հավելվածը խմբ., լրաց., փոփ. 26.08.10 N 1187-Ն, փոփ., խմբ. 15.09.11 N 1321-Ն, փոփ. 25.09.14 N 1039-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**